այս օրենքների խախտումները կասեցնելու նպատակով։ Դատարանը նույնպես կարող է հրապարակել զսպողական հրահանգ կամ այլ տիպի սահմանափակող հրահանգ ձեզ պաշտպանելու հետագա վնասից եւ կարող է հրահանգել ձեզ վնասող անհատին վճարելու ձեր փաստաբանական ծախսերը, եթե փաստաբան վարձել եք։

Ի՞նչ կարող եք դուք եւ ձեր համայնքը անել

- Արտահայտվեցեք ատելության եւ անհանդուրժողականության դեմ։
- Նեցուկ կանգնեցեք զոհերին, նրանց առաջարկելով օգնություն եւ կազմակերպեցեք բողոքի հավաքներ ձեր համայնքում։
- Քաջալերեցեք, որ հանրային գործիչները ցուցաբերեն հակադիր կեցվածք ատելության ոճիրների դեմ։
- Հիմնեցեք ատելության ոճիրի դեմ պայքարող ցանց, որը կընդգրկի օրինապահ մարմիններ, տեղական կառավարությունը, դպրոցները, կրոնական կազմակերպությունները եւ համայնքում գործող կազմակերպությունները, որպեսզի այս ցանցը շուտափույթ կերպով արձագանքի ատելության զգոնության եւ ոճիրին, երբ այն պատահի, եւ ձեռնարկի ոճիրի կանխարգելման։

Ինչպե՞ս Օգնություն Ստանալ

Եթե դուք եղել եք ատելության ոճիրի զոհ, ապա հետեւյալ աղբյուրները կարող են ձեզ օժանդակել.

- California Attorney General's Office of Victims' Services (Կալիֆորնիայի Գլխավոր Դատախազի Զոհերի Ծառայությունների Գրասենյակ) Հեռախոս՝ (877) 433-9069
- State of California - Department of Fair Employment and Housing (Կալիֆորնիայի Նահանգ-Արդար Աշխատանքի եւ Բնակեցման Բաժանմունք) Հեռախոս՝ 1-800-884-1684 TTY: 1-800-700-2320
- California State Board of Control Victims of Violent Crime Unit (Կալիֆորնիայի Պետական Կարգադիր Մարմին, Դաժան Ոճիրների Զոհերի Միավոր) Հեռախոս՝ 1-800-777-9229
- District Attorney's Victim/Witness Program (Ձեր տեղական Շրջանային Դատախազի Զոհերի/Վկաների Ծրագիր (Ըստ Շրջանի ցուցակը կարելի է գտնել հեռախոսային գրքույկում))
- United States Attorney's Victim/Witness Assistance Program (Միացյալ Նահանգների Դատախազի Գրասենյակի Զոհերի/Վկաների Օգնության Ծրագիր (Ֆեդերալ ցուցակը կարելի է գտնել հեռախոսային գրքույկում))
- United States Department of Justice, Community Relations Services (Միացյալ Նահանգների Արդարադատության բաժանմունք, Համայնքային Կապերի Ծառայություններ (Ֆեդերալ ցուցակը կարելի է գտնել հեռախոսային գրքույկում))

Այս ծրագրի մասին հավելյալ տեղեկությունների համար եւ այլ ոճիրներ կանխարգելող նյութերի վերաբերյալ գրեցեք։

Crime and Violence Prevention Center
California Attorney General's Office
P.O.Box 944255
Sacramento, CA 94244-2550
www.safestate.org

Սույն հրատարակությունը կարող եք ձեռք բերել
www.safestate.org

ինտերնետային կայքից
Սույն հրատարակությունը կարելի է ունենալ արաբերեն, հայերեն, չինարեն, հինդի, կորերեն, փանջաբի, իսպաներեն եւ վիետնամերեն լեզուներով։

B13–9119
10/06

Կանխարգելել Ատելության Ոճիրը

Ի՞նչ կարող ենք անել

Ոճիրի եւ Դաժանության Կանխարգելման Կենտրոն

Կալիֆորնիայի Գլխավոր Դատախազի Գրասենյակ

“Ատելության ոճիրները համարվում են ոճիրների մեջ ամենաանմարդկայինը, որովհետեւ չարագործի տեսանկյունից զոհը զուրկ է մարդկային ընդհանուր արժեքներից մաշկի գույնի, լեզվի, կրոնի, սեռական կողմնորոշման կամ անկարողության պատճառով: Առավել եւս, ատելության ոճիրը ազդում է այն ամբողջ խմբավորման վրա, որին պատկանում է զոհը եւ մտահոգություն է պատճառում ամբողջ համայնքին:”

Կալիֆորնիայի Գլխավոր
Դատախազի Գրասենյակ

Ատելության Ոճիրները Կալիֆորնիայում

Կալիֆորնիայում ատելության ոճիրի զոհ կիամարվեք, եթե դուք թիրախ եք դարձել ձեր ցեղի, ծագման, ազգության, կրոնի, սեռի, սեռական կողմնորոշման, ֆիզիկական կամ մտային անկարողության պատճառով եւ կամ վերոհիշյալ յուրահատկություններին իսկապես կամ ենթադրաբար համապատասխանող անհատի կամ խմբավորման հետ ձեր ունեցած առնչության համար:

Կարեւոր է կարողանալ տարբերել ատելության պատահարները ատելության ոճիրներից:

Ատելության պատահարը մի արարք է կամ մի վարք, որի շարժառիթը ատելությունն է, սակայն պաշտպանված է First Amendment-ի արտահայտվելու ազատության իրավունքով: Ատելության պատահարների օրինակներ են՝ վատ անունների կոչում, մակդիրների գործածում, ատելության նյութերի բաշխում հանրային վայրերում եւ թշնամական ատելություն դրդող նյութերի զետեղում ուրիշի սեփականության վրա: Միացյալ Նահանգների Սահմանադրության երաշխավորած ազատությունները, ինչպիսիք են խոսքի ազատությունը, թույլատրում են ատելության ելույթներ մինչեւ այն աստիճան, քանի դեռ մեկ այլ անձի քաղաքացիական իրավունքները չեն ոտնակոխվում: Եթե այս տեսակի վարքագծի զարգացումը վերածվի սպառնալիքների՝ անհատի կամ նրա ունեցվածքի դեմ, ապա այդ կիամարվի ***ատելության ոճիր***:

Ատելության ոճիրը քրեական արարք է կամ քրեական արարքի կատարման փորձ, որը գործադրվում է անհատի կամ նրա ունեցվածքի դեմ, որովհետեւ անհատը հովանավորված դասի անդամ է կամ ենթադրվում է, թե անդամ է: (Զոհը կարող է լինել մի անհատ կամ հավաքականություն):

Ատելության ոճիրների մասին պետք է տեղեկացնել համապատասխան իշխանություններին, ինչպիսիք են ձեր շրջանի ոստիկանությունը կամ շերիֆի բաժանմունքը: Եթե այս ատելության ոճիրները չտեղեկացվեն համապատասխան մարմիններին, ապա չարագործները շարունակելու են գործել իրենց համոզմունքների հիման վրա ու շարունակական սպառնալիք ներկայացնել հասարակության համար:

Ատելության Ոճիրի Զոհերը

Եթե դուք կասկածում եք, որ դուք ատելության ոճիրի զոհ եք, դուք պետք է.

- Անմիջապես զանգահարեք ոստիկանություն կամ շերիֆի գրասենյակ:
- Ստանաք բժշկական խնամք (եթե անհրաժեշտ է):
- Ճշտորեն գրի առնեք արտասանված խոսքերը եւ որեւէ այլ արժեքավոր տեղեկություն:
- Պահեք որեւէ ապացույց (գրաֆֆիտի, ձվի կեղեվներ, զոհի ինքնաշարժի վրա գրություններ): Մի վերցրեք զոհերի որեւէ ապացույց: Սպասեք մինչեւ ոստիկանության ժամանումը եւ ապացույցների լուսանկարումը:
- Գրառեք վկաների անուն(ներ), հասցե(ներ) եւ հեռախոսի համարներ:
- Եթե կարող եք, գրառեք չարագործի եւ նրա ինքնաշարժի նկարագրությունը:
- Զանգահարեք ձեր շրջանում համայնքային կազմակերպություններին, որոնք արձագանքում են ատելության ոճիրներին:

Հիմնական Տվյալներ

Հետեւյալ ցանկը ցույց է տալիս նշաններ այն մասին, թե ատելության ոճիր գործված է եղել:

- Զոհի կամ վկայի ընկալումը, թե նա ընտրվել է չարագործի կողմից իր՝ հովանավորված դասի անդամ լինելու պատճառով:
- Չարագործի գրավոր թե բանավոր մեկնաբանությունները, որոնք նախապաշարում կարող են մատնանշել:
- Պատահարի թվականը համընկնում է այնպիսի մի օրվա հետ, որ զոհի հովանավորված դասի համար ունի կարեւոր նշանակություն:
- Ցեղային կամ կրոնական տարբերություններ, ինչպես, զոհի եւ չարագործի միջեւ:
- Կազմակերպված ատելության խմբի գործունեություն տվյալ շրջանում:

Ատելության Ոճիրի Զոհերին Մատչելի Ծառայություններ

- Ըստ Կալիֆորնիայի Սահմանադրության Զոհերի իրավունքների օրինագծի դուք ունեք որոշակի իրավունքներ: Օրինակ, դուք կարող եք իրավասու լինել չարագործի դատավարության մասին տեղեկություն ձեռք բերելու եւ դատավճռի արձակման ժամանակ իրավունք ունենալ ներկայացնելու զոհի վնասի հաստատագիր:
- Դուք կարող եք որեւէ կորստի, վնասի կամ վնասվածքի համար հատուցման իրավունք ունենալ:
- Դուք նաեւ պաշտպանված եք Ralph Act-ով կամ Bane Act-ով: Այս օրենքների համաձայն, դատարանը ձեզ կարող է սահմանել նյութական հատուցում: Դատարանը կարող է պահանջել ձեր իրավունքները ոտնահարողից վճարելու Ձեզ քաղաքացիական տուգանք ($25,000), ձեր կրած փաստացի վնասը հատուցելու համար եւ/կամ հավելյալ գումար չարագործին պատժելու եւ ապագայում